ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «14» Դեկտեմբեր 2025թ N 819 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 2148-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի օգոստոսի 22-ի ««Ստանդարտ դիալոգ» Շիրակի մարզային կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ազգային

տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 2148-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետում «098» թիվը փոխարինել «141» թվով:

2. Հրամանի 2-րդ կետում «Հավատարմագրման տեխնիկական կոմիտեի կողմից հետագա հավատարմագրման կամ հավատարմագրման մերժման մասին համապատասխան որոշման ընդունումը» բառերը փոխարինել «19.10.2028 թվականը» բառերով:

3. Հրամանի 2-րդ կետում «Ն-36 (Հ-36) 2024» բառը փոխարինել «Ն-36 (Հ-36) 2025» բառով:

4. Հրամանի 5-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն հրամանի նկատմամբ կատարման հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:»:

5. Հավելվածի Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկը լրացնել նոր՝ 15-րդ կետով. «15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 98 որոշումը «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի վերաբերյալ (ԵԱՏՄ ՏԿ 047/2018) (գործելու է ուժի մեջ մտնելուց հետո):»:

6. Հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգեր ցանկը լրացնել նոր՝ 4-րդ կետով. «4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշում:»:

2025-04-03 13:15:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ